բնեար ապրելով Հայաստանում, մանկից սովորելով հայի զրութիւնը, մանաւանդ հայ գիւղացու զրութիւնը, նա նկարագրում էր բոլորին այնպէս մանրամասնօրէն, որ ամեն մի պատկեր պարզ ու րեալիստ կերպով գոյն-փոխւում էին մեր աչքի առաջ։ Հայկական վիլայէթների բոլոր անկիւնների մասին խօսելով, նա գեղեցիկ կերպով նկարագրում էր Թաճկաստանի քուրդ ցեղերի կուլտուրական ու տնտեսական զրութիւնը, ապա նրանց ու հայերի փոխադարձ յարաբերութիւնները։ Նա առանձնապէս ոգևորւում էր, երբ խօսքն անցնում էր հայ գիւղացիութեանը։ Նրա ոգևորութիւնից պարզ երևում էր, որ նրա ամբողջ իդէալը գիւղացիութիւնն էր—նրա վիճակի բարւոքումը, նրա մտաւոր յառաջադիմութիւնը։

Այդ խօսակցութեան միջոցին, նայելով նրան, ապա խոր յոյզ ցնելով նրա այնքան խելօք նկարագրութիւններին և դատողութիւններին, ես իմ մտքում զրախտ կերպով ասում էի, որ այս մարդը գաղափարի մարդ է։ Եւ ես նրան գաղափարի մարդ անուանեցի ոչ խօսակցութիւնների արտաքին գեղեցկութեան համար, այլ նրա խորիմաստ բովանդակութեան, որով նա մարմնացել է, որով և ապրել է մինչև իր մահուան բարձը։

Ջաւարեանը գաղափարական մարդ էր բառիս բուն նշանակութեամբ։ Նա այն հազուադիւտ մարդկանցից էր, որ ապրում են ուրիշների համար։ Թշուառի ցաւը նա իր ցաւն էր համարում։ Եւ այդ ցաւը նա զգում էր սրտի խորքերում և այն սիրտն էլ մինչև մահուան բարձէն բաբախեց իր անտէր եղբայրների սիրով։ Այդ օրուանից ես մեծ ծանօթացայ նրան, և ամեն անգամ մի առանձին հաճոյքով էի հանդիպում նրան։ Ամեն անգամ հանդիպելիս նա էլ ուրիշ խօսակցութիւն չունէր, բացի հայը և Հայաստանը, մանաւանդ հայ գիւղացին։

Այսօր զրկուեցինք նրանից, այսօր մեծ սուգը համակել է Տաճկական Հայաստանին և բոլոր հայ գիւղացիութեան։

Այսօր Ջաւարեանը մնաց հայ պատմութեան էջերում։

Այդ էջերից նրա անունն այլևս չի հանուիլ։

Այսօր Ջաւարեանի հողաթումբը դեռ թաց է հայի թափած արցունքով։ Այդ արցունքը չի պակասելու նրա յիշատակից, այն շարունակուելու է դեռ շատ երկար, դեռ մինչև այն օրը, երբ որ նրա հետևորդները մի փոքր կլրացնեն նրա տեղը։

Կարծում ենք աւելորդ է ասել, որ ամեն մի հայի բաղձանքն այսուհետև այն պէտք է լինի, որ հայի համար Ջաւարեանները անպակաս լինեն։

Դուցէ և ժամանակի ընթացքում մի բարի հանգամանքի շնորհիւ Ջաւարեանի նմանները շատանալու են, բայց տեսնելով մեր այժմեան գործիչներին, և առանձնապէս՝ ուշադրութիւն դարձնելով նրանց գործելակերպին, մնում ես յուսահատութեան մէջ։

Ջաւարեանը գաղափարի մարդն էր։

Ն. ՆԵՐՍԷՍ

ՄԵՐ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

(Մեծ Ցերեկոյթի առթիւ)

Մեզնից 1500 տարի առաջ Ս. Մեսրոպ հնարելով հայերէն գրերը, ժամանակի կաթողիկոս Ս. Սահակի և մի խումբ աշակերտ-թարգմանիչների հետ դնում է հայոց գրականութեան հիմքը, որի առաջնահասուն պտուղն է Աստուածաշունչ Գրքի թարգմանութիւնը։ Մեր հին լեզուն, որով գրուած են Աստուածաշունչը և մեր մատենագիրների գրքերը, երկար տարիների ընթացքում հասնելով ծաղկման, զանազան աննպաստ թշուառութիւնների պատճառով շուտով կանգ է առնում և մնում գործածական միայն եկեղեցիներում։ Մեր խնդրից դուրս լինելով այս երևոյթի բուն պատճառների մէջ մտնելը, որ լեզուների յարափոփոխ էվոլիւցիայի օրէնքի մէջ պէտք է որոնել, նկատենք, որ գործօն պատճառներից մէկն էլ մեր երկրի դիրքն էր. որի գաւառները, բաժանուելով իրարուց խոր խոր ձորերով, անմատչելի լեռներով, հնարաւորութիւն չէին տալիս բնակիչներին իրար հետ շփուելու, գիւղերին հաղորդակցութիւն ունենալու։ Մէկ էլ հէնց լեզուի ծաղկման շրջանում, ինչպէս նրանից առաջ էլ և յետոյ, քաղաքականութիւնը Յունաստանից է գալիս և մեծ չափով լեզուն ու գրականութիւնը ազդւում է ու անհարազատանում յունաբանների շնորհիւ։

Բայց մինչ այս հանգամանքները չէին էլ, դարից մեզ վրայ են գալիս արաբները, որոնց տիրապետութիւնը յարատևում է մինչև հազար թուականները։ Թէև այդ ժամանակներում էլ մենք ունենում ենք ծաղկման շրջաններ, մեր քաղաքները՝ Անին ու Դուինը և միւսները, մեր վանքերից շատերը հանդիսանում են մի մի ուսման վայրեր—գիտութիւն ու լոյս տարածողներ ժողովրդի մէջ, բայց շուտով տիրում են ասիական վայրենի ցեղերի արշաւանքները, որ տևում են մի քանի հարիւր տարիներ։ Արիւնհեղութիւնների սարսափելի շրջաններ են, որ տարածւում են ամեն կողմից, հարաւից, արևմուտքից։ Տուղրիլ-բէկ, Ալփ-Ասլան, Չինգիզխան, Լէնկ-Թեմուր երկնքից ուղարկուած պատուհասներ են համարւում մեր տխրատես պատմիչների բերանով։ Մի կողմից սրանք,

միւս կողմից յոյների ատելութիւնը, երրորդ կողմից բնական արհաւիրքները վերջ են տալիս Բագրատունեաց թագաւորութեան յիշատակին—Անի քաղաքին. քարուքանդ է դառնում երկիրը, այրւում, մորթւում, աւերակների տակ են թաղւում մեր գրքերը, գրչագրերը, փառքերն ու եկեղեցիները։

Թէև այս դարերում բուն Հայաստանից դուրս հաստատւում է Կիլիկիայում հայկական նոր թագաւորութիւն, որտեղ դարձեալ ծաղկում է մեր գրականութիւնը, բայց նա էլ շուտով մարում է և ամբողջ ժողովուրդը ընկնում մահմեդական ցեղերի լծի տակ։

Այդ խեղճ ժամանակ, երբ Հայաստանը վերջին օրերն էր ապրում և Հայաստան աւերակների վրայ նստած՝ իր սև օրն էր լալիս, ընդհանուր անտէրութիւնից օգտուելով, ստեղծւում են արևմուտքում Օսմանեան թագաւորութիւնը, արևելքում՝ Նոր Պարսկաստանը Աբբասեանց։ ԺԵ. դարից Հայաստանի հողի վրայ սկսւում են թուրք-պարսկական կռիւները, որ տևում են մինչև ԺԷ. դարու կէսը։ Կռիւների ասպարէզ դարձած Հայաստանում ամէն կերպ բարքերի անկում, վայրենացում. ասում են գիր ու տառ ճանաչող մարդ չէր ճարւում. շատերը մոռացել էին ոչ միայն լեզուն, այլ և հայութիւնը։ ԺԷ. դարու սկզբին պարսից Շահ-Աբբասը 100,000 գերի վարելով, Արարատեան դաշտը ու նրա շրջակայքը գերեզմանոցի է փոխում։ Եւ ահա, ով կարողանում է, փախչում է տալիս գլուխ առած երկիր. մի մասը Փոքր Ասիայի ծովափնեայ քաղաքները, մի մեծ խումբ Կոստանդնուպոլիս, այլք Ղրիմ, Լեհաստան, Ռուսիա և Հոլանդիա։

II

Հայերը զրկուելով մայր երկրից հեռու տեղեր, մոռանում են լուսաւոր աշխարհն։ Այն խմբերը, որ հաստատւում են Ռուսիայում և Հոլանդիայում ազգի կրթութեան գործում մեծ ծառայութիւններ են մատուցանում։ Դրանցից Մխիթարեան հայրերը հաստատուելով Վենետիկի մօտ, փորձարկումներ են հանդիսանում միւս գաղթավայրերի համար, որոնցից իւրաքանչիւրը սկսում է մտածել մայր երկրում մնացած անտէր ժողովրդի մասին։ Երկրի ապահով վայրերում երևում են վանական դպրոցներ, որոնք հաւաքում են իրանց մէջ աշակերտներ, դրագիտութիւն են սովորեցնում։ Այդ դպրոցներից դուրս են գալիս արժանաւոր մարդիկ, որոնք կենդանացնում են մեռած գրականութիւնը։ ԺԸ. դարում Ղարաբաղի մէլիքների ազատութեան գաղափարը կենդանի շարժումի շրջանն է մտնում։ Դրանց յետ Ռուսաստանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերի երևելիները մտածում են ազատութիւն շնորհել հայ ժողովրդին քրիստոնեայ ռուսների հովանու տակ։

ԺԹ. դարու սկզբին յաջողւում է Ռուսաց տէրութեան իր թևերը տարածելու Կովկասում. իսկ մի քառորդ դար անցած՝ Կովկասի նշանաւոր մասը մինչ Էջմիածին ու Երևան Ռուսաստանի մասերն են։ Ազատ շնչելու օրեր են։ Ներսէս Ե. Տփխիսի առաջնորդը՝ յետոյ կաթուղիկոս՝ դնում է ազգաշինութեան առաջին քարը. բացւում է Ներսիսեան դպրոցը։ Տարիներ առաջ հետու Մոսկուայում Լազարեան տոհմի շնորհիւ գոյութիւն ունէր արդէն Լազարեան ճեմարանը։ Այս անդրանիկ դպրոցների սաները մէկը միւսից առաջադէմ ու աչքառու մտնում են Դորպատի և Մոսկուայի համալսարանները կատարելագործուելու։ Դրանք հէնց ուսանողութեան օրերից դառնում են մեր վերածնունդի կարապետները։ Այս ուսանողներից ամենաանդրանիկի Աբովեանի ձեռով գրւում է 1842 թուին «Վէրք Հայաստանի» նշանաւոր գիրքը աշխարհաբար լեզուով։ Գիրքը ամբողջովին տոգորուած լինելով հայրենիքի և ազգի սիրով, առաջին անգամ ծանօթացնելով հայ ժողովրդի նիստ ու կացին, նրա դարաւոր ցաւերին ու հոգսերին, ուրախութեան ու վշտին մեծ ազդեցութիւն է թողնում ժամանակի ընթերցող սերնդի, մանաւանդ Աբովեանից յետոյ եկող Դորպատի ուսանողների վրայ, որոնք տանէր էին դարձել Ներսիսեան և Լազարեան դպրոցների։ Այդ գրքի ազդեցութեան տակ նրանք յօրինում և երգում են ազգասիրական և ուսանողական ուրախ երգեր աշխարհիկ, հասկանալի լեզուով, որոնք թև առնելով, քաղցր ու հնչուն, գուրեկան եղանակներով թռչում են ամէն տեղ, ուր հայեր կային։ Դոդոխեանի «Մեծանուն»-ը, Շահ-Ազիզի «Ազնիւ ընկեր»-ը, Պատկանեանի «Մայր Արաքսին», Նալբանդեանի «Մեր հայրենիքը», Բարխուդարեանի և այլոց բազմաթիւ համանման երգերը հնչւում են բերնէ բերան, անցնում Մոսկուայից ու Դորպատից մինչև հեռաւոր Կովկաս—դէպի Տաճկաստան, Պարսկաստան և այլ գաղթավայրեր։

Այս երգերը մեծ չափով նորաբողբոջ լեզուն հարստացնում, ծաւալում են և միւս կողմից արթնացնում հայերի ննջած սրտերը նոր յոյզերով։

Այսպէս մի անգամ նոր գրականութիւնն ու նոր լեզուն յաղթող կերպով հող գտնելով իր ոտքի տակ, մեր ուսումնասէր գրողներն ու գործիչները կենդրոնանում են Տփխիսում և իրենց աշխատութիւնների նիւթ վերցնում են հայկական միջավայրից։ Իսկ երբ վաթսունական թուականներին Ռուսաստանում սկըս-

ւում է ազատագրական շարժումը և նրանք ազատութիւն են ստանում, մեր գրականութիւնն էլ գտնում է իր ուղին։ Մեր գրողները հետևելով հարևան մեծ ազգի գրականութեան ուղին և մտնում են ժողովրդին՝ նրա ցաւերով ապրում, նրա հետ ուրախանում, նրա հետ սգում։ Նախկին գործիչներին յաջորդում են նոր կարող ուժեր, որոնք շատ բաներում նմանուելով Րաֆֆուն ու Գամառ-Քաթիպային գտնում են նաև մեր բնորերգու բանաստեղծները, գեղեցիկ, փառքի երգիչներ։

Պատկերացնելով այն դժուարին ճանապարհը, որով անցել է մեր գրականութիւնն ու լեզուն, պիտի ասել, որ երբ մի ազգ՝ ընկած Աքսորի մէջ, այլազգիների չափազանց աննպաստ հանգամանքներում հալածական մեռելութիւնից յետոյ իր կորովի շնորհիւ միայն կարողացել է նորից գերեզմանից ելնել, լեզու ու գրականութիւն ստեղծել, պահել ու ծաղկեցնել և այսօր տօնել հայոց տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ միասնական յոբելեանները, ապա մեզ վրայ անտակի պարտք կայ գնահատել այդ աշխատանքը, արութեամբ և անձնուրութեամբ խնամել մեր բազմաչարչար պապերի գանձը։

Ահա այն ուսանքը, որ այսօր Ս. Մեսրոպի և նրա աշխատասէր յաջորդների անմահաց յիշատակը տալիս է մեզ հպարտութ և հարիւրաւոր տարիների համար։

Յ. Բ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Ընկեր Սուրէն

Դպրոցում ուսումը նոր է սկսել, պէտք է նշանակուած ժամին ճիշտ լինել դպրոց և պատրաստ՝ մտնել դասարան. Ուսուցչի օրինակը աշակերտների համար մեծ նշանակութիւն ունի. դու այդ շատ լաւ գիտես։

Տասն օրից համահայն ուզում եմ մի երկու խօսք գրել, թէ ինչպէս պետական միջնակարգ դպրոցի հայ աշակերտները տօնեցին գրերի և տպագրութեան Մեծ Յոբելեանը։ Դու այն ասիս, որ մինչև 1905 թ. պետական դպրոցներում սովորող հայ աշակերտներին, նոյն իսկ նշանաւոր եկեղեցական տօներին չէին արձակում, իսկ այժմ Պետական Դումայի հաստատութեան յետոյ՝ ոչ միայն եկեղեցական, այլ արձակում են նաև նշանաւոր ազգային տօներին և հանդէսներին։

Ասում են թէ աշխարհում հաստատուն բան չկայ, ամէն ինչ փոփոխական է։

Ո՛վ գիտէ, գուցէ այս կարգադրութիւնն էլ ժամանակի ընթացքում փոփոխութեան ենթարկուի։ Բայց առ այժմ յիշատակելի է, որ նշանաւոր տօները յարգւում են։ Այդ հանգամանքը կրթիչ և դաստիարակիչ նշանակութիւն ունի մատաղ սերնդի համար։

Հոկտեմբերի 13-ին, շաբաթ օրը Կովկասեան ուսումնարանական հոգաբարձութեան կարգադրութեամբ հայ աշակերտներին ազատ թողցին դասերից։ Բայց շատ ցաւալին այն է, որ պետական դպրոցներում սովորող հայ աշակերտները, որոնք թուով երկու-երեք անգամ աւելի են հայ դպրոցներում սովորող աշակերտներից, չկարողացան ոչ մի տեղ սրտալ ուխտով մի երկու խօսք լսել։ Դրանց համար ոչ ոք չէր մտածել։ Կարծես թէ պետական դպրոցում սովորող հայ աշակերտը որևէ առնչութիւն չունի հայ կեանքի հետ. Ոչ դասախօսութիւն կայ, ոչ ցերեկոյթ և ոչ հանդէս։ Մի խօսքով ինչպէս ամեն մի տօն, առհասարակ, նոյնպէս և այս համազգային տօնը աշակերտութեան համար անցաւ առանց։ Աշակերտների մի մասը գնաց ծովափը զբօսնելու, միւս մասն էլ ֆուտբոլ խաղալով անցկացրեց ժամանակը։

Բաքուն հարուստների քաղաք է և ազգային հասարակական գործերի գլուխը կանգնած են հարուստները. Իսկ յայտնի է, որ հարուստները չեն ուզում տեղ տալ աւելի գործունեայ անձնաւորութիւններին. Նրանց գործունէութեան մասին հո՛ աւելորդ է խօսել. Եւ ահա այսպէս երիտասարդ սերնդի տրամադրութիւնը՝ համազգային տօնը փառաւոր կատարելու՝ բաղխուեց չէր համապատասխանում յոբելեանական յանձնաժողովի անհոգութեան և անփութութեան։ Գուցէ և հարցնես, թէ ինչու չեն մտածել այդ մասին դպրոցի կրօնուսոյց քահանաները։ Բայց միթէ քեզ յայտնի չէ մեր քահանաների ինչ լինելը։ Միթէ այսօր էլ կարելի է միամտաբար դրանցից լաւ բան սպասել։ Մանաւանդ Բաքուի քահանաներից, որոնց մասին խօսելիս պէտք է Խորենացու խօսքեր փոխառնել. «քահանաները ագահ, անփոյթ, չարհաւեր, բթամիտ և այլն»։

Օրինակի համար յաջորդ անգամ կուղարկեմ քեզ մեր դպրոցի կրօնուսոյց քահանայի նկարագիրը, որպէս զի կարողանաս ամփոփել քո գաղափարը քահանաների մասին։ Ուսուցիչներ և տեսուչներ եւս կան, որոնք աշխատում են օտարազգիների համար տօները փառաւորել. Օրինակ՝ անցեալ տարի դպրոցների վարչութիւնների գրգռմամբ ծնողական ժողովում հարց էին բարձրացրել օտարազգիների տօների առաջ լինելը. բայց այդ հարցը չանցաւ։ Սրբաւակայիր, եթէ մի դասարանի աշակերտ որևէ առարկայի համար քիչ ատեան է թուանշան ստանում, այդ էլ պատճառաբանում են տօների չասութեամբ. Դրա համար երբ հայոց տօն է լինում՝ ուսուցիչը աւելի շատ դաս է տալիս և պահանջում է անպատճառ ներկայ լինել դասին, հակառակ դէպքում պակաս թուանշանն է պատրաստ։ Աշակերտներն էլ երկիւղից արհամարհում են տօները և շտապում են ուսումնարան։ Մի աշակերտի ծնող չկայ, որ այդ օրինակ ուսուցիչներին պատասխանատուութեան ենթարկէ։

Այսպէս և աշակերտն իր ազգային և եկեղեցական տօները պատուելու պատասխանատուութեան մէջ, մնում է շուարած։ Այս հանգամանքն այնքան ցաւալի չէր լինիլ, եթէ տօները լինէին սովորական օրերի տօներ, բայց կանգառութեան տօնը Մեծ Յոբելեանի տօները, որ, ինչպէս գիտես, շատ բարձր նշանակութիւն ունի, ոչ միայն ազգային, այլ և համամարդկային կուլտուրականութեան տեսակէտից, խիստ աններելի պիտի համարուի։ Առ այժմ ողջոյն։

Քո Մուշեղ

Բաքու։